ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԱՆՆԱ ԿԱՐԵՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Էդգար Սուրենի Կարապետյանի «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնախնդիրը դասվում է քրեական իրավունքի, կրիմինալոգիայի և քրեակատարողական իրավունքի գիտության և պրակտիկայի առաջնային հարցերի շարքին: Բռնության, այդ թվում՝ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը եղել է և մնում է խիստ արդիական յուրաքանչյուր պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Մեր երկրում անչափահասի նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի վերլուծության արդիականությունը պայմանավորված է նշված հանցագործությունների թվի աճով և դրան զուգահեռ առկա բարձր լատենտայնությամբ: Լատենտայնությունը հետևանք է այն բանի, որ հասարակությունը վախենում է բարձրաձայնել անչափահասի նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործության մասին. լռելու պատճառները բազմաթիվ են՝ վախը, ամոթը և այլն, մինչդեռ այս հանցագործության հետևանքներն անդառնալի են ու անփոխհատուցելի: Ուստի, պետությունը պետք է գործուն կառուցակարգեր նախատեսի անչափահասի սեռական անձեռնմխելիության արդյունավետ քրեաիրավական պաշտպանության համար: Այս համատեքստում

Է.Կարապետյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսության մեջ հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել «անչափահասների սեռական անձեռնմխելիություն» հասկացությունը, վերլուծության համատեքստում անդրադարձել է «սեռական անձեռնմխելիություն» ու «սեռական ազատություն» հասկացությունների հարաբերակցությանը և արդյունքում ընդգծել, որ սեռական անձեռնմխելիությունը հանդիսանում է սեռական ազատության անհրաժեշտ և բազային տարր և դրա դեմ կատարված ոտնձգությունն անխուսափելիորեն ոտնձգում է նաև անձի սեռական ազատության դեմ: Միջազգային փաստաթղթերում և օտարերկրյա օրենսդրության մեջ առկա կարգավորումների հիման վրա հեղինակը վերլուծել և հիմնավորել է «անչափահաս» և «երեխա» եզրույթների տարանջատման անհրաժեշտությունը: Հեղինակն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում կատարել փոփոխություն՝ հստակեցնելով «սեռական բնույթի բռնի գործողություններ» հասկացությունը. այս կապակցությամբ հեղինակն առաջարկում է շեշտադրել, որ սեռական բնույթի բռնի գործողությունները պետք է կապված լինեն տուժողի մարմնի մեջ ներթափանցման հետ, իսկ ներթափանցմամբ զուգորդված սեռական բնույթի բռնի գործողությունները առաջարկում է նախատեսել որպես քննարկվող հանցագործության որակյալ տեսակ: Հանցագործության օբյեկտի ուղղահայաց և հորիզոնական դասակարգումների վերլուծության համատեքստում հեղինակն ընդգծել է անձի ազատության, պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտ դիտելու անհրաժեշտությունը: Հեղինակն անդրադարձել է «անառակաբարո գործողություն» հասկացության սահմաններին, առաջարկել է նշված արարքի համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմում «գործողություն» եզրույթը

փոխարինել «արարք» եզրույթով, ինչպես նաև անօգնական վիճակի օգտագործումը նախատեսել որպես անառակաբարո արարքների համար պատասխանատվություն նախատեսող համապատասխան հոդվածի ծանրացնող հանգամանք և նշված հանցակազմի՝ իր կողմից առաջարկող խմբագրությունն է ներկայացրել:

Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է նաև անչափահասների սեռական անձեռնմխելիության վերաբերյալ մեր երկրում գործող օրենսդրական կարգավորումները, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Նիդերլանդներ, Դանիա, Շվեյցարիա, Շվեդիա, Իսպանիա, Լեհաստան, ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա, ՌԴ, Ղազախստան, Տաջիկստան, Ուկրաինա, Բելառուս) քրեական օրենսգրքերում ամրագրված՝ անչափահասի սեռական անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությանը վերաբերող նորմերը: Այս կապակցությամբ հեղինակն իրավամբ ընդգծել է և ատենախոսության մեջ ներկայացված առաջարկություններում հետևողականորեն պահպանել է մոտեցումն առ այն, որ արտասահմանյան երկրների դրական փորձի ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ և միտված չէ արտասահմանյան տարբեր երկրների քրեական օրենսդրություններում առկա իրավակարգավորումների մեխանիկական արտատպմանը ՀՀ օրենսդրության մեջ:

Հեղինակը մանրամասն վերլուծել է վերաբերելի քննչական և դատական պրակտիկան, տուժողի անօգնական վիճակի վերլուծության համատեքստում հղում է կատարել նաև ՌԴ գերագույն դատարանի պլենումի որոշմանը: Հանգամանալից վերլուծության է ենթարկել ՀՀ-ում անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների կառուցվածքը, վիճակը և դինամիկան, ուսումնասիրել է մի շարք միջազգային փաստաթղթերում (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, Եվրոպայի խորհրդի «Սեռական շահագործումից և

սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Լանցարոտեի կոնվենցիա) առկա վերաբերելի կարգավորումները:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական որակման հիմնախնդիրներին նվիրված աշխատություններն ու այլ դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության փորձառնական հիմքը կազմել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տվյալները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքերում առկա վիճակագրությունը, ինչպես նաև ՀՀ քննչական և դատական պրակտիկայի նյութերը:

Է.Կարապետյանի ատենախոսական աշխատության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այն անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունները համալիր և ընդգրկուն ուսումնասիրության ենթարկելու՝ հայրենական իրավագիտության առաջին փորձն է: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հեղինակը ցուցաբերել է ինքնատիպ ու հետաքրքիր մոտեցումներ, վիճելի և խնդրահարույց հարցերի շուրջ կարողացել է փաստարկված բանավեճ ծավալել այլ հետազոտողների հետ:

Ատենախոսի առաջարկած դրույթների և եզրակացությունների հիմնավորվածության բավարար աստիճանն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական և տեսական բազայով, գիտական աղբյուրների, ինչպես նաև ՀՀ վիճակագրության, քննչական և դատական պրակտիկայի նյութերի օգտագործմամբ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են իմացության դիալեկտիկական, ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, անալիզի, սինթեզի, համեմատական-իրավական, իրավական մոդելավորման, հասարակագիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդներ:

Վերոնշյալ գիտական մեթոդների կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի բարելավման նպատակով: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել անչափահասների սեռական անձեռնմխելիության՝ ընդհանրապես և անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների որակման ոլորտում՝ մասնավորապես, իրականացվող հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև քրեական իրավունքի դասընթացի համապատասխան բաժնում:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած աշխատանք, զուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից: Մասնավորապես.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներում (կետ 2), ինչպես նաև ատենախոսության 56-րդ, 114-115-րդ և 123-124-րդ էջերում հեղինակն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 138-ի և 139-ի երրորդ մասի առաջին կետով նախատեսված որակյալ տեսակը լրամշակել և ձևակերպել հետևյալ կերպ՝ *«Տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի, վերընթաց ազգականի, մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ ումից երեխան գտնվում է աշխատանքային կամ ծառայողական կախվածության մեջ»*: Իր առաջարկը հեղինակը հիմնավորել է Լանցարոտեի կոնվենցիայի 28-րդ հոդվածով, որտեղ օգտագործվում են «ընտանիքի անդամ», «երեխայի հետ ապրող անձ» ձևակերպումները: Նշված ձևակերպումները,

մեր կարծիքով, անձանց առավել հստակ շրջանակ են նախատեսում և որպես ծանրացնող հանգամանք ենթակա են գնահատման, քանի որ նշված անձինք հանցանքի անխոչընդոտ կատարման պայմաններում են գտնվում (ապրում են երեխայի հետ) և երեխայի վրա ազդեցության տեսանկյունից ավելի ծանր հետևանքներ են առաջացնում: Համաձայն ենք, որ գործող քրեական օրենսգրքում առկա ծանրացնող հանգամանքը անձանց նեղ շրջանակ է նախատեսում (ծնողին), սակայն գտնում ենք, որ հեղինակի կողմից առաջարկված՝ *«վերընթաց ազգական»* ձևակերպումն էլ լայն է և մեկնաբանության առումով ոչ միանշանակ: Ուստի կարծում ենք, որ հեղինակի կողմից առաջարկվող ծանրացնող հանգամանքում երեխայի հետ համատեղ բնակվելու, ընտանիքի անդամ լինելու փաստի շեշտադրումը, ինչպես դա արված է Կոնվենցիայում, հնարավորություն կտա խուսափել «ազգական» բառի հետ կապված ծայահեղ նեղ կամ լայն մեկնաբանություններից:

Վերոշարադրյալից բացի, կարծում ենք, աշխատանքային կամ ծառայողական կախվածությունից բացի, անհրաժեշտ է առաջարկվող ձևակերպման մեջ ներառել նաև ֆինանսական կախվածությունը:

2. Ատենախոսության 28-րդ էջում հեղինակն առաջարկել է սեռական հանցագործությունների իր բնորոշումը: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով առաջարկված բնորոշման հետ՝ կարծում ենք, որ դրանում առկա գնահատողական ձևակերպումը անհամաչափ նեղացնում է խախտման շրջանակը. ստացվում է, որ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված ոչ բոլոր հանրավտանգ արարքներն են ենթակա որակման որպես սեռական հանցագործություն, այլ միայն նրանք, որոնք ոչ թե պարզապես ոտնահարում են, այլ որոշակի եղանակով, այն է՝ ***կոպտորեն*** են ոտնահարում հասարակական բարոյականության նորմերը:

3. Ատենախոսության առաջին գլխի մեկ ամբողջական պարագրաֆ նվիրված է ՀՀ-ում անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների կառուցվածքին, վիճակին, դինամիկային, որտեղ հեղինակը

վերլուծություններ է կատարել հիմք ընդունելով առկա պաշտոնական վիճակագրությունը: Կարևորելով ատենախոսության մեջ նման վերլուծության առկայությունը՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ աշխատանքն էականորեն կշահեր, եթե վերլուծության ենթարկված վիճակագրական ցուցանիշների մեջ ներառվեին նաև 2017, 2018 թվականների և 2019 թվականի առաջին կիսամյակի վիճակագրությունը (հասկանալի է, որ հեղինակը 2019 թվականի ցուցանիշներն ամբողջությամբ ուսումնասիրել չէր հասցնի, քանի որ դրանք նոր են ամփոփվում) և ուսումնասիրությունը չսահմանափակվեր 2007-2016 թվականների վիճակագրությամբ:

4. Պաշտպանության ներկայացվող դրույթներում (կետ 7), ինչպես նաև ատենախոսության 137-138-րդ էջերում հեղինակն առաջարկում է օրենսդրական փոփոխություն կատարել՝ սահմանելով, որ անչափահասի դեմ ուղղված սեռական հանցագործությունը չի կարող որակվել ծանրացնող հանգամանքով, եթե սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողության մասնակիցների տարիքային տարբերությունը չի գերազանցում երկու տարին: Երկու տարվա շեմի սահմանումը հեղինակը հիմնավորում է նրանով, որ *«երկու տարվա «քայլը» վաղուց ընդունված է և կիրառելի (12, 14, 16, 18...)»*:

Գիտակցելով, որ զուցե այս հարցը դուրս է սույն հետազոտության շրջանակներից՝ առաջարկում ենք հեղինակին իր հետագա հետազոտությունների ընթացքում առավել խորը վերլուծության ենթարկել վերոնշյալ տարիքային շեմերը սահմանելու հիմնավորումները (զուցե նաև՝ կրիմինալոգիական տեսանկյունից), քանի որ կարծում ենք, որ հանցագործությունների որակման առումով հեղինակի կողմից ներկայացված առաջարկությունները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

5. Ատենախոսության 128-րդ էջում, կարծում ենք, առկա է տեխնիկական վրիպակ, քանի որ հեղինակն առաջարկել է *«անառակաբարո գործողությունների հասարակ տեսակի համար ևս որպես քրեական քրեական պատասխանատվության*

ենթարելու տարիք սահմանել տասնվեց տարեկանը», մինչդեռ կարծում ենք հեղինակն ի նկատի է ունեցել ոչ թե տասնվեց, այլ տասնչորս տարեկանը, քանի որ գործող օրենսգրքում անառակաբարո գործողությունների հասարակ տեսակի համար քրեական պատասխանատվության տարիքը հենց տասնվեցն է:

Կարծում ենք, տեխնիկական վրիպակի արդյունք է նաև այն, որ ատենախոսության 75-76-րդ, 120-121-րդ, 139-րդ էջերում, վերլուծելով քննչական և դատական պրակտիկայի նյութերը, հեղինակը սեռական ոտնձգությունից տուժած անչափահասի անձը նույնականացնելու հնարավորություն ընձեռող և գիտական վերլուծության համար կարևորություն չներկայացնող անձնական տվյալներ է հրապարակել (անուն-ազգանուն, բնակության վայր և այլն): Վրիպակի տեխնիկական բնույթի վերաբերյալ մեր դիտարկումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ նույն ատենախոսության, օրինակ, 96-րդ էջում անձնական տվյալներ պարունակող համանման նյութի վերլուծության ժամանակ հեղինակը տուժողի անուն-ազգանունն ամբողջության չի ներկայացրել՝ այդպիսով սահմանափակելով սեռական ոտնձգությունից տուժած անչափահաս անձի նույնականացումը:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Է.Կարապետյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Էդգար Սուրենի Կարապետյանի «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն: Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.05

մասնագիտությանը («Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Ա.Կ. Վարդապետյան

«Ա. Վարդապետյանի ստորագրությունը հաստատում եմ»

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ
իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ.Մ. Խաչիկյան